

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

30 հունիսի 2014 թ

N 1

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 12 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (06.12.2011թ., ՀՕ-334-Ն) 3-րդ հոդվածի 1-ին մասով կատարված փոփոխությունը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 6-րդ կետով **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի մարտի 1-ի «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի կիրառության վերաբերյալ» N 12 պաշտոնական պարզաբանման 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի շրջանակներում ապրանքների (այդ թվում՝ հրատարակությունների) մատակարարման ու ծառայությունների մատուցման գործարքների դեպքում Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, հանձնակատարի կամ գործակալի համար ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում հանձնակատարին կամ գործակալին հասանելիք գումարը (վարձատրության և հանձնակատարի կամ գործակալի կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց որպես փոխհատուցում վճարվող գումարը՝ առանց ԱԱՀ-ի).

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (06.12.2011թ., ՀՕ-334-Ն) ընդունմամբ հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա կնքվող գործարքների մասով գործակալի կամ հանձնակատարի վարձատրությունը որպես հարկվող շրջանառություն դիտարկելու առումով 2003 թվականի հունվարի 1-ից, ըստ էության, փոփոխություն չի կատարվել:»:

**ՀՀ ֆինանսների նախարար**

**Գ. Խաչատրյան**